

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՓՎ/45-2021

ՀՀ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻ ՄՈՏ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ, Մ-6, ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈՐԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ԿՄ 38+450 - ԿՄ 90 + 191 ՀԱՏՎԱԾ) ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան

**Խորհրդի
անդամներ՝**

S. Ավինյան	ՀՀ փոխվարչապետի պաշտոնակատար, Խորհրդի նախագահ
Ս. Պապիկյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի պաշտոնակատար
Վ. Քերոբյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատար
Ռ. Բադալյան	ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար
Ռ. Պետրոսյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարարի պաշտոնակատար
Ք. Ղալեջյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ (ճանապարհային ոլորտը համակարգող)
Ս. Թովմայան	Կադաստրի կոմիտեի ղեկավար
Հ. Սարգսյան	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ (համաձայնությամբ, Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում, ճանապարհաշինության բնագավառը համակարգող)
Ն. Մարտիրոսյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ-ծրագրի ղեկավար (համաձայնությամբ)
Ս. Մաչյան	«Ճանապարհային դեպարտամենտ» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրեն

Կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստն իրականացվել է ս.թ. մայիսի 11-ին գրավոր ընթացակարգով: ՀՀ փոխվարչապետի պաշտոնակատար, կառավարման խորհրդի նախագահ Տ. Ավինյանի՝ ս.թ. մայիսի 11-ի թիվ 04/03.17/15419-2021 գրությամբ Խորհրդի անդամներին ուղարկվել են օրակարգը և կից նյութերը՝ Խորհրդի անդամներին առաջարկվելով իրականացնել գրավոր քվեարկություն:

Խորհրդի անդամների կողմից օրակարգի վերաբերյալ առարկություններ կամ առաջարկություններ չեն ստացվել, ուստի օրակարգը համարվել է հաստատված:

Համաձայն Խորհրդի աշխատակարգի 13-րդ կետի և սույն նիստի գրավոր քվեարկության արդյունքների՝ Խորհուրդն օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումը.

- 1. Սադախլո-Քագրատաշեն անցման կետի տարածքում՝ Դեբետ գետի վրա նոր կամրջի շինարարության ծրագրի շրջանակներում 2018 թվականի մայիսի 30-ին կնքված թիվ CS-SBB-001 տեխնիկական վերահսկողության պայմանագրի թիվ 3 փոփոխությունը հաստատելու վերաբերյալ:**

Քննարկումների արդյունքում Խորհուրդը որոշեց՝

1. Սադախլո-Քագրատաշեն անցման կետի տարածքում՝ Դեբետ գետի վրա նոր կամրջի շինարարության ծրագրի վերաբերյալ զեկույցն ընդունել ի գիտություն:
2. Հավանություն տալ 2018 թվականի մայիսի 30-ին կնքված թիվ CS-SBB-001 տեխնիկական վերահսկողության պայմանագրի թիվ 3 փոփոխությանը:
3. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Ս. Պապիկյանին՝ գործող կարգին համապատասխան հնարավորինս սեղմ ժամկետում ստորագրել 2018 թվականի մայիսի 30-ին կնքված թիվ CS-SBB-001 տեխնիկական վերահսկողության պայմանագրի թիվ 3 փոփոխությունը:

- 2. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Քագրատաշեն) բարելավման ծրագրի շրջանակներում 2019 թվականի օգոստոսի 12-ին կնքված թիվ ADB/M6/CS/SSS/01 «Նախագծային փոփոխությունների և լրամշակման խորհրդատվական ծառայություններ» պայմանագրի փոփոխման թիվ 1 համաձայնագիրը հաստատելու վերաբերյալ:**

Քննարկումների արդյունքում Խորհուրդը որոշեց՝

1. Հավանություն տալ 2019 թ. օգոստոսի 12-ին կնքված թիվ ADB/M6/CS/SSS/01 «Նախագծային փոփոխությունների և լրամշակման խորհրդատվական ծառայություններ» պայմանագրի փոփոխման թիվ 1 համաձայնագրի ստորագրմանը:
2. «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրեն Ս. Մաչյանին՝ գործող կարգին համապատասխան հնարավորինս սեղմ ժամկետում ստորագրել 2019 թ. օգոստոսի 12-ին կնքված թիվ ADB/M6/CS/SSS/01 «Նախագծային

փոփոխությունների և լրամշակման խորհրդատվական ծառայություններ» պայմանագրի փոփոխման թիվ 1 համաձայնագիրը:

- 3. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի շրջանակներում 2018 թվականի ապրիլի 3-ին կնքված Խորհրդատվական ծառայությունների մատուցման թիվ ADB/M6/CS/QCBS/01 «Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի Սահման Մ6 միջպետական ճանապարհի կմ38+450-կմ90+191 հատվածի վերականգնման և բարելավման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն և նախագծերի վերանայում» պայմանագրի թիվ 5 փոփոխման համաձայնագիրը հաստատելու վերաբերյալ:**

Քննարկումների արդյունքում Խորհուրդը որոշեց՝

1. Հավանություն տալ 2018 թ. ապրիլի 3-ին կնքված Խորհրդատվական ծառայությունների մատուցման ADB/M6/CS/QCBS/01 «Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի Սահման Մ6 միջպետական ճանապարհի կմ38+450-կմ90+191 հատվածի վերականգնման և բարելավման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն և նախագծերի վերանայում» պայմանագրի փոփոխման թիվ 5 համաձայնագրի ստորագրմանը:
2. «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրեն Ս. Մաջանին՝ գործող կարգին համապատասխան հնարավորինս սեղմ ժամկետում ստորագրել 2018 թ. ապրիլի 3-ին կնքված Խորհրդատվական ծառայությունների մատուցման ADB/M6/CS/QCBS/01 «Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի Սահման Մ6 միջպետական ճանապարհի կմ38+450-կմ90+191 հատվածի վերականգնման և բարելավման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն և նախագծերի վերանայում» պայմանագրի փոփոխման թիվ 5 համաձայնագիրը:

- 4. Եվրոպական ներդրումային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային Ծրագիր Տրանշ 3-ի շրջանակներում վերակառուցվող Լանջիկ-Գյումրի ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման մրցույթի վերաբերյալ:**

Քննարկումների արդյունքում Խորհուրդը որոշեց՝

1. Հաստատել Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 3-ի ինժեներական ծառայությունների գնման պայմանագիրը «ԱյԱրԴի Ինջինիերինգ» ՍՊԸ-ին 919,800 Եվրո, 264,000 ԱՄՆ դոլար և 280,350,000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով /ներառյալ ԱԱՀ/ շնորհելու վերաբերյալ Գնահատող հանձնաժողովի որոշումը:
5. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ 3-ի Թալին-Լանջիկ հատվածի խորհրդատվական ծառայությունների մատուցման թիվ T4-CS-01-D պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Քննարկումների արդյունքում հորհուրդը որոշեց՝

1. Հավանություն տալ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 3-ի Թալին-Լանջիկ հատվածի խորհրդատվական ծառայությունների մատուցման թիվ T4-CS-01-D Պայմանագրի թիվ 9 Փոփոխությանը:
2. «Ճանապարհային դեպարտամենտ» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրեն Ս.Մաչյանին՝ գործող կարգին համապատասխան «ԱյԱրԴի Էնջինիրինգ» Ս.Ր.Լ (Իտալիա) ընկերության հետ սեղմ ժամկետում ստորագրել Պայմանագրի թիվ 9 Փոփոխությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

X

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ